

Հուսիկ Արա

Կուլիս

Ինչ-որ բան նեխել է
Դանեմարքում, միլորդ.
մեր դերը խաղանք խելագար,
գուցե դա է փրկությունը մեր:
Միշտ էլ ծափ կտա ամբոխը,
հետո կշպրտի քար.
հիմա չեն հարցնում՝կա՞ մեկը ձեր մեջ,
որ լինի արդար:

Մենք կամավոր ենք՝
շալակը դրած ծաղր ու պարսավանք՝
հանուն ճշմարիտ խոսքը ասելու.
դեռ խոցվելու ենք սրից՝սայրը թունավոր,
մենամարտում արքայի մատնած:
Իսկ հետո մեկը՝պալատի ծաղրածուն,
կասի մեր փոխարեն՝
բառեր, բառեր… մնացյալը լռություն է:

Կարևոր մի բան անդարձ է նեխել
Դանեմարքում, միլորդ.
մենք խելագարվում ենք,
և սա է փրկությունը մեր:

Յատուկ Պոէմ